

ՀԱՍԿՈՒԾ ԼՈՒՐԵՐ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱ.

ԳԻՐՅ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՌՅԱՆԻ ՄԱՍԻՆ.—
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրա-
տարակչությունը լուս է ընծայել ակադեմիայի Ար-
վեստի պատմության և տեսության բաժնմնութեքի գի-
տական աշխատակից Թնարիկ Գրիգորյանի «Ա. Ա.
Սպենդիարյանը աշխատավիրամը» Ընթերցողը այդ գրքի
միջոցով ժամանակը է հայ երաժշտական կուլտու-
րայի նշանավոր գործիւն մեծանուն կոմպոզիտոր Ա-
լեքսանդր Սպենդիարյանի կյանքին ու ստեղծագոր-
ծությանը: Գրքում համբամանորեն բնութագրվում են
մեծ կոմպոզիտորի ձախական, սինֆոնիկ, կամերա-
յին ստեղծագործությունները:

Առանձին գործիւն է նվիրված Սպենդիարյանի «Ալ-
մասու» օպերային:

Հետարգրագիտան են գրքում տեղավորված մի շարք
նկարներ, ինչպես օրինակ՝ «Ա. Ա. Սպենդիարյանը» և
Ա. Կ. Գրագումովը Յալթայում 1910 թվականին»,
նույն թվականին Սպենդիարյանին նվիրված «Ա. Մ.
Գրիգոր լուսակարը՝ գրողի մակագրությամբ» և
մի շարք այլ նյութեր, որոնք ցույց են տալիս հայ
խոշորագույն կոմպոզիտորի կապը ուստական կու-
տուրայի նշանավոր գործիների հետ: Գրքում տեղ են
դառնել նաև կոմպոզիտորի կյանքին և երաժշտական
դրսունդներությանը վերաբերող արթիվային նյուե-
րիք:

Աշխատավիրամը խմբագրել է կոմպոզիտոր Մ. Ա-
ռայանը:

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՀՈՐԱԿԱՑՈՒՅՑԸ ԽՄԲԻՆ. — Երևանի մոլո-
րակացուցը (պահեատարիան) մեծ աշխատանք է տա-
նում աշխատավորության մեջ աստղաբաշխական գի-
տարիամների տարածման ուղղությամբ: Երեք ամսվա-
ընթացքում անց է Կարգած մոտ 200 դասախոսու-
թյուն, որոնց մեջ՝ «Սովորական աստղաբաշխական
դիտավիան նվաճումները», «Մոլորակների բնու-
րյանքը», «Տիեզերքի կառուցվածքը», «Կյանք կա-
մարդու ուրիշ մոլորակների վրա» և այլն: Մոլորա-
կացուցը այցելել են 11.000 այցելուներ՝ դպրոցա-
կաններ, կոլտնտեսականներ, ուսանողներ, բանվոր-
ներ, գիտության աշխատանքներ և այլն:

Գոռատուի բնիքացում մոլորակացուցում կարգա-
փելու են «Բուռա գիտնականների մեծ գերը աստղագի-
տության զարգացման մեջ», «Հրաբուժներն ու երկ-
րաշաբթյունը», «Գիտությունը և գրուց աիծերքի
մասին», «Ժամանակը և օրացուցը» և այլ թեմանե-
րով դասախոսություններ:

ՏՈՒՖԻ ԳԻՄԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒՄ. —
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի շնան-
կությունի և սարբազորությունների հիմնախոսուում հետազո-
տական աշխատանք է տարվում երեսապատման շնան-
կությունի դիմաց կոմության ուղղությամբ: Այդ նախ-
ակով հիմնախոսուում դիտական աշխատողները անց

կացրին տարրեր տեսակների տուփով երեսպատման
մի շարք բնակելի և հասարակական շենքերի հնատա-
կությունն սերկայում ինստիտուտի արշավա-
խուուրը Կալինինոյի և Նոյեմբերյանի շրջաններում
ուսումնասիրում է հարյուրամյակների ընթացքում
արևի, անձրևի, բամու և սառնամանիրի ազդեցու-
թյան տակ գտնվող հայկական ճարտարապետության
մի շարք պատմական հուշարձանների երեսպատման
նյութի դրությունը:

Հավաքված նյութերը պետք է օգտագործվն երես-
պատման նյութերի քամահարման երեսովների
դեմ պայքարելու միջոցառումների մշակման ժամա-
նակ:

ԱԿՈՒՄԲԱ-ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՈՒ-
ՍՈՒՅՑՈՒՄ. — Վերջացրեց իր աշխատանքները ակումբ-
ների և գրադարանների վերջների վերապատրաստ-
ման միայնա գասընթացները: Գայընթացներն ավար-
տել են 73 մարդ: Այս տարի կուլտուր-լուսավորական
հիմնարկներն ստացան նոր համալրում: Ակումբա-
գրադարաններին տեխնիկումը տվեց իր առաջին շըր-
շամագլուխությունը: Տեխնիկումն ավարտել են 54 հոգի:
Երիտասարդ մասնագետների մեծ մասը մեկնեցին
աշխատանքի Հայաստանի գյուղական վայրերը:

ՆՈՐ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ. — Ղուկասյանի շրջանի թուրա-
գուու գյուղում բացվեց նոր գրագարան: Նոր գրա-
գարաններ են ստեղծված նաև Կոստյու շրջանի Ա-
վան, Ստեփանավանի շրջանի Կույբէչէ, Արտաշատի
շրջանի Դվինի գյուղերում և այլ տեղերում: Տարվա
սկզբանի Հայաստանի գյուղական վայրերում կազմա-
կերպված է մոտ 20 նոր գրագարան: Երանցից յու-
րաբանը ստացել է մեծ բանակությամբ գրակա-
նություն:

ՈԱՀԻՒԾՆ ԳՑՈՒՂՈՒՄ. — Ավարտված են Մարտունու-
շրջանի Երանու, Աղամիսան, Զորագյուղ և այլ գյու-
ղերի սագիոյի անցկացման աշխատանքները: Այդ
գյուղերի կուլտուրականների տներում, կուլտուրա-
կան հիմնարկություններում արդեն սարբավորված են
առաջին 150 սագիուրանաբացին կետերը:

Այս տարվա սկզբից սագիոյի է անց կացված նաև
իշխանի և եղբածնի շրջանների 4-աման գյուղերում: Այս
տարվա ընթացքում սագիոյի է անցկացված ըն-
դամենը 20 գյուղերում: Այդ ժամանակված ընթացքում
սարբավորված են մոտ 1.000 սագիուրանաբացին
կետեր:

ԱՇՏԱՐԱԿԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԾՈՒՄ. — Աշտարակի
շրջանային գուլտուրայի տունը ինքնագործ խմբակների
ուժերով շրջանի կոլտնտեսային աշխատողների հա-
մար հաճախակի կազմակերպում է բեմադրություն-
ներ, երգի-պարի երեկոներ, ինչպես նաև հանդի-

պուաներ արվեստի ու գրականության լավագույն վարպետների հետ Կուլտուրայի տան խմբագործ թատրոնական խմբակը շրջանային կենտրոնում և մյուս գյուղերում ներկայացրել է Գ. Սոմոդովյանի «Պեպոն», Հ. Պարոնյանի «Բաղդասար աղքարը», Գ. Գաբրիելյանի «Նրա ուժը», Ա. Պապայանի «Թախտավորյանները» և այլ պիեսներ։

75 հոգուց բաղացած քառաձայն երգեցիկ խումբը մեծ հաջողությամբ ելույթներ է ունենում կողմնականների համար և մասնակցում է ուսուպուրիկական ստուգատեսներին։

Վերջին շրջանում կարգացվել են դասախոսություններ Մ. Գորկու, Ե. Վախտանգովի, Գ. Ազգայանի և արվեստի ու գրականության այլ նշանավոր վարպետ-

ների մասին։ Աշխատավորների հետ հանդիպումներ

և ուսուցչերի բանաստեղծներ Ն. Ջարյանը, Հ. Շամշերը, Շ. Շիրազը,

Վերջին Աշխարհում ելույթ ունեցավ ժողովական արտիստներ Վ. Փափազյանը, որը կատարեց Հատվածներ «Օթելլո», «Համբետ» և «Դիմականանդես» պիեսների, Աշխատավորները շեմորեն ընդունեցին նեծատաղանդ արտիստներ, Նույնպիսի հաջողությամբ անցած ամվան թատրոնի արտիստներ Վ. Սոմոդովյանի ամվան թատրոնի արտիստներ Վ. Վաղարշանի, Ա. Ավետիսյանի, Գ. Խաժակյանի, Գ. Աշուույանի, Վ. Մարգոմու, Ա. Եղանի հետ ունեցած հանդիպումները։

Կուլտուրայի տոնը կազմակերպում է նաև ժամանակիցների պիեսների կողեկտիվ դիտումներ։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՄԱՆԿԱԿԱՆ ՆՈՐ ՍԱՆԱՑՈՒԹՅԱՆ—Աշխարհակի շրջանի հնաբույգության մոտ՝ ստվերու պուրակի կողքին բացվել է Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության նոր մանկական ասուղջարանը (սանատուրիան)։ Այսուղե ծովի մակերեսությունը 2.000 մետր բարձրության վրա կառուցված է վարդագույն տուֆով երեսապատճառ սրանչելի մի շինություն՝ ըստավոր և ընդարձակ սենյակներով։ Այս տարի նոր ասուղջարանում 7—14 տարեկան 300 երեխան հեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆՈՐ ԵԵՆՔԸ.—Թաղորամանի փողոցուած կառուցվում է նոր հասարակ շենք՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի համապահության նիստերի գանձման, Ակադեմիայի շենքի նախարարական անդամանության ակադեմիայի խսկական անդամ Ա. Սաֆարյանը։ Այդ շենքը պետք է լինի ուսուպուրիկայի մայրաքաղաքի մեծ շենքերից մեկը։ Նա կը բարեցնի 2.500 քառակուսի մետր տարածություն, Առաջին հարկում կտեղավորվի գրապահոցը, որն ունի 80.000 հատոր գիրք։ Այսուղե նախատեսվում է ունենալ կատալոգի և գրքերի տեխնիկական մշակման համար առանձին սենյակներ։

Երկրորդ հարկը առանձնացվում է ընթերցասրահու և ցուցահանդեսային սենյակների համար։ Գրքերը

գրապահոցից ընթերցասրահ պետք է մատուցվեն լիքուու շրջանում պետք է լինի նաև նիստերի դահլիճը՝ 400 մարդու համար։

Երրորդ հարկում պետք է տեղավորվի Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի համապահության նիստերի գանձման, Ակադեմիայի շենքի նախարարական պետք է կառուցվի բնական բարից, իսկ Հայտակը՝ մարմարից։

ԱՇԽԱՑՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԱՃՌ.՝ Շնորհիվ բանվորների կուլտուր-կենցաղային պայմանների անընդհատ վերելքին՝ անում են նրանց խնայողությունները։ Բնիցացիկ տարվա անցած վեց ամիսների բնիցացրում, Հայաստանի խնայորամարկների ավանդատումների թիվը ավելացել է 11.000-ուդ.

Այդ ժամանակաշրջանում Հայաստանի աշխատավորները ձեռք են բերել 7.217.000 ուուրլու երեկը տոկոսանոց պետական փոխառություն։ Նշանակացից շափով ավելացել է աշխատավորների պետական փոխառության շահումների գումարը։ Կես տարվա ընթացքուած վճարված են 17.500.000 ուուրլու շահումներ։ Բացի գրանից աշխատավորներին վճարված են մի քանի միլիոն ուուրլու խոշոր շահումներ՝ 1.000-ից մինչև 50.000 ուուրլու շափով։

